

N 366

C 1926 N 489

Պատկերներ բոլոր յերկրների, միացե՛լ.

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«Կոչի անգրագ.» ընկ. կենտր.
ՎՍՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 1

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(ՑԵԿ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐ)

„ԿՈՐԶԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ“

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИЕ
ИНСТИТУТЫ
ИССЛЕДОВАНИЙ
Ленинградского Науч.
СССР

374.6

4-78

1925

ՅԵՐԵՎԱՆ

~~N 366~~
C 21383

C 1926 N 459
- MAR 2010

Պրոֆեսարներ բոլոր լեզուներով, միացե՛ք.

374.6

1-78

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«Կուրջի անգրագ.» ընկ. կենտր.
Վ.Ս.ՐԶՈՒԹՅԱՆ

№ 1

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՏԵԼ. ՀԱՐԱԿԻՑ ԽՈՐՀԻՄԵՐ)

„ԿՈՐԶԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ“

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОСЛОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1925

ՏԵՐԵՎԱՆ

53571

24 MAY 2013



60339.67

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 149 բ.

Պատ. 4582

Տիրաժ 600

Սույն կանոնադրությունը հաստատված է Ներքերոժոժողովման կողմից 22-ին ոգոստոսի 1925 թ.

Ի. ա. Ներքերոժոժողովման՝ Ա. Քեթեկյան Ադմինիստ. բաժնի վարիչ՝
(ստորագ.)

«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԸՆԳՆԱՆՈՒՐ ՄԱՍ.

1. Կամենալով նպատակ է. Ս. Խ. Հ. իշխանությանը, Հայաստանի Խորհրդայնացի 10-րդ տարեդարձին մեր պետության աշխատունակ (16.30 տ.) բանվորության և գյուղացիության միջից վերացնելու անգրագիտությունը, Քաղլուսղլիվարի Անգ. վեր. կենտ. արտ. Հանձնաժողովին կից հիմնվում է «Կորչի անգրագիտությունը ընկերություն»:

2. Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Անգ. վեր. կենտ. արտ. Հանձնաժողովի ցուցմունքներով և ծրագրերով:

3. Առաջադրյալ նպատակին հասնելու համար ընկերությունը նյութապես և բարոյապես աջակցում է Անգ. վեր. կենտ. արտ. Հանձնաժողովի աշխատանքներին՝

ա) Դասագրքերի, ընթերցանության և մեթոդական ձեռնարկների հրատարակման գործում:

բ) Անգրագիտության վերացման կայանների ցանցի լայնացման գործում:

գ) Ընկերությունը մղում է լայն ագիտացիա հոգևոտ անգրագիտության վերացման:

դ) Ոգնում է Անգ. վեր. կենտ. արտ. Հանձնաժողովին լիկ-կայանների կահավորման և ուսման պիտույքներ ձեռք բերելու գործում:

4. Ընկերութիւնը գործում է հանրապետութեան մասշտաբով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԶԻՋՆԵՐԸ

1. Ընկերութեան բշիջները կարող են կազմակերպվել խոր-ճիթ-ընթացքաբաններին, ակումբներին, գարոցներին, գյուղ խորհուրդներին, կուսակցութեան և կոմյերիտըշիջներին, կոոպերատիվներին, կոմսոլներին, կուլիկարվներին, ղինվորական զորամասերին կից և այլն:

2. Բշիջը կարող է կազմակերպվել կուսակցութեան. կոմյերիտ-միութեան, Արհեստակցական, հասարակական և խորհրդային մարմինների, ինչպես նաև ընկերութեան ճյուղերի ինիցիատիվայով:

3. Ընկերութեան բշիջը նպատակ ունի ամեն կերպ ոժանգակել ընկերութեան կողմից տարվող անգրագիտութեան վերացման աշխատանքներին:

4. Ընկերութեան բշիջները պարտավորվում են իրենց առ-որյա աշխատանքները համաձայնեցնել ընկերութեան համապատասխան ճյուղերի և քաղութոքականների գործնեութեանը:

5. Ընկերութեան բշիջի մեջ ընդունվում են այն անհատները, վորոնք ցանկութեւն են հայտնում աշխատելու բշիջում և ընտ-րելու ու ընտրվելու իրավունք ունեն:

6. Բշիջը կարող է ցրված համարվել ա) բշիջի անդամների կեսի (կամ ավելիի վորոշմամբ, բ) ընկերութեան համապատասխան ճյուղի վորոշմամբ: Բշիջի ցրման դեպքում նրա ամբողջ ստաց-վածքը մնում է ընկերութեան համապատասխան ճյուղի տրա-մադրութեան տակ:

7. Բշիջը պարտավորվում է չը խախտել ընկերութեան կանոնադրութեւնը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԶԻՋԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

1. Ընկերութեան բշիջի վարչական որդանները հետևյալներն են՝

ա) Ընդհանուր ժողովը:

բ) Բշիջի նախագահութեւնը:

գ) Սեկցիաները:

2. Բշիջի ընդհանուր ժողովը հրավիրվում է բշիջի նախա-գահութեան կողմից վոչ պակաս քան տարին յերկու անգամ: Ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև բշիջի վերստուգիչ

հանձնաժողովի պահանջմամբ: Ընդհանուր ժողովին նախագահում է բշիջի անդամներից մեկը ընտրված ձայների մեծամասնու-թեամբ: Վորոշումները և բանաձեւերը ընդունվում են անգամ-ների ձայների մեծամասնութեան վորոշմամբ:

3. Ընդհանուր ժողովը ընտրում է ա) բշիջի նախագա-հութեւնը, բ) վերստուգիչ հանձնաժողով և գ) սեկցիաներ (աղի-տացիոն, ֆինանսական, կազմակերպչական և գարոցային), հաստատում է բշիջի աշխատանքների նախագիծը, լսում է բյու-րոյի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները:

4. Ընդհանուր ժողովը որինակ է համարվում, յերբ անդամ-ների կեսը կամ ավելին ներկա յեն: Նշանակված ժամից մեկ ժամ անցնելուց հետո ընդհանուր ժողովը համարվում յեկրորդ անգամ հրավիրված և որինական է լինում անկախ ներկա յեղող-ների թվից:

5. Յուրաքանչյուր բշիջ, վոր ունի տասից պակաս անդամ ընտրում է մեկ ներկայացուցիչ-լիազոր. իսկ տաս կամ ավել՝ նախագահութեւնը:

6. Ընդհանուր ժողովների մեջ ընկնող ժամանակաշրջա-նում բշիջի նախագահութեւնը հանդիսանում է բշիջի միակ լիա-զոր մարմինը և իրավունք ունի կանոնադրութեան և ընդհա-նուր ժողովի վորոշումների սահմաններում յերեման հանելու իր ինիցիատիվան:

7. Բշիջի բյուրոն ղեկավարում է բոլոր սեկցիաների (բացառութեամբ վերստուգիչ հանձնաժողովի) և բշիջի անդամն-րի գործնեութեւնը:

8. Բշիջի նախագահութեւնը իրավասու յե կազմելու նոր սեկցիաներ և տալու նրանց հանձնարարութեւններ ու պահան-ելու հաշվեաւութեւնը:

9. Նախագահութեան անդամները վճողական ձայնի իրա-վունքով մտնում են բոլոր հանձնաժողովների (բացառութեամբ վերստուգիչ հանձնաժողովի) նախագահութեւնների կազմի մեջ:

10. Բոլոր սեկցիաների նախագահութեւնների անդամները խորհրդատու ձայնի իրավունքով մտնում են բշիջի նախագա-հութեւն մեջ:

11. Բշիջի նախագահութեւնը իր միջից ընտրում է մեկ քարտուղար մեկ գանձապահ և մեկ նախագահ:

12. Բշիջի նախագահութեւնը պարտավորվում է բշիջի ամ-սական գործնեութեան մասին ընկերութեան համապատաս-

խան վարչությանը ներկայացնել մանրազննին զեկուցում վոչ ուշ քան հաջորդ ամսվա հինգը:

ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բջիջի բոլոր անդամները պետք է ակտիվորեն աշխատեն ա) լիկ-կայաններում կամ անգրադիտության վերացման վորևե ժարմի մեջ բ) բջիջի այս կամ այն սեկցիայում: գ) անհատական ու խմբակային դասավանդման կարգով պարապեն անգրադետներին հետ: Ակտիվ աշխատանք արտահայտվում է նաև անգրադիտության վերացման կազմակերպչական աշխատանքներին մասնակցություն ցույց տալով և բյուրոյի մասնակի հանձնարարությունները կատարելով:

2. Քաղաքային բջիջները անդամները առորյա հանձնարարությունների ժամանակ (նաև արձակուրդներին) պարտավորվում են աշխատանքները համաձայնեցնել անգրադիտության վերացման տեղական որդաններին:

3. Ընկերության բջիջի անդամները պարտավորվում են յուրաքանչյուր ամիս բջիջի գանձարկը մուծել իրենց անդամավճարները՝ մուտքի վճար 10 կ. տալիս են բոլորը: Անդամավճարների միմյանմը նշանակվում է ամսական 5 կոպ:

Փաճոթութուն.— Կարմիր բանակայինները մուտքի վճար չեն տալիս. իսկ ամսավճար տալիս են մեկ կոպ. գյուղացիները անդամավճար՝ 3 կոպ. յերկրագործությամբ զբաղվող գյուղացիները մուտքի վճար չեն տալիս. տնայնագործները մուտքի վճար տալիս են 5 կոպ:

4. Անդամները մուտքի վճարը գանձարկը մտցնելուց հետո ստանում են անդամակցական տոմս, վորոնք իրենց ուժի մեջ են մնում միայն մի տարի, հաջորդ տարին նրանք պետք է վերանորոգվեն:

5. Այն անհատները, վորոնք վեց ամսվա ընթացքում անդամավճար չեն տալիս, համարվում են ընկերությունից մեքենարար դուրս մնացածներ:

ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Բջիջի միջոցները ստացվում են ինքնակամ նվիրատվություններից, անդամավճարներից, յերեկույթներից, ներկայացումներից, հանգանակություններից, գրականություններից և կրթականը-

դանների և այլն վաճառքից, շեֆկոմիտայի կողմից անգրադիտության վերացման համար հատկացված գումարից և այլն:

Փաճոթութուն.— Նվիրատվությունների և գանձումների ժամանակ, թե նվիրաբերողը և թե ստացողը փոխադարձ կերպով ստանում են պատշաճ ստացականներ: Նվիրներ հավաքողները պարտավորվում են հավաքված գումարի հետ միասին համապատասխան մարմին (բջիջի գանձարկչին) ներկայացնել նաև իրենց մոտ գտնվող ստացականները:

2. Բջիջի միջոցները ծախսվում են՝ իր կողմից բացված դպրոցի կահավորման, գրենական ու դասական պիտույքների և ուսուցչի վարձատրության վրա և այլն:

3. Անդամավճարների 5 տոկոսը և մյուս գանձումների 15 տոկոսը բջիջը պարտավոր է մուծել ընկերության Գավվարչության գանձարկը:

Փաճոթութուն.— Քաղաքային բջիջները Գավվարչության գանձարկը յեն մուծում, յեթե նրանց հաշվին գործող լիկ—կայան չկա բոլոր մուտքի 75 տոկոսը:

ԲՋԻՋԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Բջիջի վերստուգիչ հանձնաժողովը 6 ամիսը մեկ անգամ ստեղծվում է գանձարկը և բջիջի դրամային հաշվետվությունը ու արդյունքների մասին զեկուցում բջիջի ընդհանուր ժողովին և բարձրագիւր մարմին (գրավոր):

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. «Կորչի անգրադիտությունը» ընկերության կազմակերպչական սխեմով բջիջային է:

2. Շրջաններում 10 բջիջ կազմակերպվելու դեպքում՝ որինակելի խրճիթ-ընթերցարանին կից կազմվում է ընկերության շրջանային բյուրո: Տերիտորյալ կերպով Գավկենտրոնի մեջ ընկնող շրջանն առանձին շրջբյուրո չի ունենում, նա անմիջապես յենթարկվում է Գավճյուղին:

3. Ընկերության գավճյուղի ժամանակավոր վարչությունը գավառում 20 բջիջ գոյություն ունենալու դեպքում հրավիրում է ընդհանուր ժողով ու տալիս իր հաշվետու զեկուցումը, վորից հետո ընտրվում է տեղական վարչություն (7 անդամ, 3 թեկնածու):

4. 2-րդ աստիճանի դպրոցներին, տեխնիկումներին յոթնամյա գյուղատ. դպրոցներին, Յերևանում չգտնվող բանֆակներին, կուսդպրոցներին, խոր. հիմնարկների կոլլեկտիվներին և այլերին կից, ինչպես նաև գյուղերում կազմակերպված բՆԻՇները յենթարկվում են ընկերության համապատասխան գավառային կամ շրջանային ճյուղի վարչությանը:

5. Յեթե գավառային քաղաքում 2-րդ աստիճանի դպրոցներին, տեխնիկումներին, յոթնամյա գյուղատ. դպրոցներին և Յերևանում չը գտնվող բանֆակներին կից կազմակերպված բըշիշների թիվը հասնում է 10-ի, կազմվում է ներկայացուցչական բյուրո, վոր և անմիջապես յենթարկվում է ընկերության համապատասխան գավճյուղին և պատասխանատու յենրա առաջ:

6. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր Յերևանի Պետ. Համալսարանի, Կուս. դպրոցի, ռազմա—քաղաք. և հրամանատ. դպրոցների ու բանֆակի ուսանողությունը աշխատելու յե վոչ միայն Յերևանում և Յերևանի գավառում, այլ և մյուս գավառներում, վորտեղ նրանք գնում են ամառային արձակուրդներին, տոներին. և արձակուրդներից հետո—Յերևանի Պետ. Համալսարանի, Կուսգայրոցի, Թաղմա—քաղաքական և հրամանատարական դպրոցների ու բանֆակի բՆԻՇները յենթարկվում են անմիջապես «Կորչի անգրագիտությունը» ընկերության Կենտ—Վարչությանը:

7. ԲՈԻՀ-երին կից (Յերևանում) բՆԻՇներ կազմակերպվելու դեպքում կազմվում է ներկայացուցչական բյուրո, վոր անմիջապես յենթարկվում է «Կորչի անգրագիտությունը» ընկերության Կենտ. — Վարչությանը:

ԸՆԿ. ԳԱՎ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Կորչի անգրագիտությունը» ընկ. բոլոր Գավկենտրոններում ունենում է իր ճյուղերը, վորոնք միացնում են տվյալ գավառի ամբողջ աշխատանքները:

2. Ընկ. Գավվարչությունները ընտրվում են ընդհանուր գավառային ժողովից, բաղկանում են 10 հոգուց, (7 անդամ, 3 թեկնածու,) ունենում են նախագահություն, բաղկացած նախագահից, քարտուղարից և գանձապահից և ղեկավարում են գավառային աշխատանքները ընկ. գծով:

3. Գավառային ներկայացուցչական ժողովը հավաքվում է

տարեկան մեկ անգամ և որինական է համարվում յերբ ներկայեն լինում անդամների կեսից ավելին:

4. Ընդհանուր ժողովը քննարկում է անցյալ գործնությունը և մշակում առաջիկա գործնության նախագիծը:

5. Գավառային վարչությունները ունենում են գավ. վերատուգիչ հանձնաժողովներ (տես. վերատուգիչ հանձնաժողովների մասին):

6. Գավվարչության միջոցներն են կազմում՝

ա) ԲՆԻՇներից ստացվող տոկոսները:

բ) Իր կողմից կազմակերպված յերեկույթներից, հանդեսներից, շաբաթուր—յակներից և այլն ստացված գումարները:

գ) Գավառմիսների տոկոսային հատկացումները և պարբերական նվերները, կրծքանշանների ու զրականության վաճառքի արդյունքները և այլն:

7. Գավվարչությունը իր գանձարկղի մուտքի գումարների 20 տոկոսը ուղարկում է Ընկերության Կենտ—Վարչությանը:

ԸՆԿ. ԿԵՆՏ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընկերության բարձրագույն որգանը հանդիսանում է համահայաստանյան համագումարը:

2. Համագումարները լինում են ա) հերթական, հրավիրվում են Կենտ—Վարչության կողմից տարին մեկ անգամ. բ) արտակարգ, հրավիրվում են ըստ տնհրաժեշտության կենտ վարչության, կամ վերատուգիչ հանձնաժողովի և կամ ընկերության ճյուղերի $\frac{1}{5}$ պահանջմամբ:

3. Համահայաստանյան համագումարը որինական է համարվում յերբ մասնակցում են ընկերության անդամների ներկայացուցչությանց $\frac{3}{4}$ մասը:

4. Ընկերության Կենտ—վարչությունը ընտրվում է համագումարի կողմից (15 անգամ 7 թեկնածու) և համագումարների մեջ ընկնող ժամանակաշրջանում հանդիսանում է ընկերության բարձր գործադիր մարմինը:

5. Կենտ վարչությունը ընտրում է նախագահություն, բաղկացած 5 անդամից և 3-ը թեկնածուից: Նախագահությունը իր միջից ընտրում է՝ նախագահ, փոխ-նախագահ, քարտուղար և գանձապահ:

6. Կենտ—վարչությունը հավաքվում է տարին յերկու ան-

գամ, իսկ նախագահութիւնը շաբաթական վոչ պակաս քան մեկ անգամ և ղեկավարում է տեղական ճյուղերի գործնեութիւնը, նրանցից ստանալով յեռամայա ղեկուցումներ և փոխադարձաբար ուղարկելով հրահանգներ և ցուցմունքներ, պատրաստվում է համահայաստանյան համագումարին ղեկուցելու ընկ. գործնեութիւնը, դրամային հաշվետվութիւն և առաջիկա գործնեութիւնը նախագծի և նախահաշվի մասին:

7. Կենտրոնում և տեղերում Անգ. Վեր. Արտ. հանձնաժողովի ներկայացուցիչը վարչութիւն և նախագահութիւն ժողովներին մասնակցում է վճռողական ձայնով:

8. Կենտրոնական և գավառային վարչութիւնները իրավասու յեն սույն կանոնադրութիւն սահմաններում հրատարակել համապատասխան հրահանգներ, կնքել պայմանագրեր, բացել փոխառութիւններ և հարաբերութիւն մեջ մտնել պետական և հասարակական մարմինների հետ: Ընկերութիւնը $\frac{2}{3}$ -ից ավելի անդամների հրաժարման դեպքում ընկերութիւնը համարվում է լուծված, իսկ գույքը մնում է Անգրագիտութիւն վերացման կենտ:—Արտ. հանձնաժողովին:

9. Կանոնադրութիւն մեջ փոփոխութիւն մտցնել կարող է միայն Համահայաստանյան լիազորների համագումարը:

ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

1. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը՝ 3 հոգուց բաղկացած, ընտրվում է համահայաստանյան համագումարի կողմից մեկ տարով, ինչպիսի պատասխանատու համահայաստանյան համագումարի առաջ, վորին և ներկայացնում է ղեկուցում ընկերութիւն գործնեութիւն մասին:

2. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի պարտականութիւնն է՝

ա) հետևել կենտ-վարչութիւն հաշվետվութիւն կանոնավոր տանելուն և ստացվածքին:

բ) Հետևել վորպեսզի ընկ Կենտ. վարչութիւնը կանոնադրութիւնից շեղումներ չանի:

գ) Անհրաժեշտութիւն դեպքում (Կենտ-վարչութիւն հապաղումների ժամանակ) հրավիրել ընդհանուր ժողովներ:

3. Գավառային վարչութիւններին կից Գավ. վերստուգիչ հանձնաժողովները ունեն նույն պարտականութիւնները, ինչ վոր կենտ-վերստուգիչ հանձնաժողովը:—

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԶԻՉԸ ԳՅՈՒՂՈՒՄ.

Այսօր, հասակավորների մեջ տարվող անգրագիտութիւն վերացման աշխատանքների 5-րդ տարեշրջանը թևակոխելիս, արձանագրելով քաղաքի աշխատանքների ավարտման սկզբնավորութիւնը, մեր գործնեութիւն ծանրութիւն կենտրոնը պետք է տեղափոխենք գյուղ:

Այդ գործում «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւնը, վորպես անգ. վեր. աշխատանքների հասարակական ոժանդակութիւնը կազմակերպող մարմին և կուլտուրական ծակտոր, հայկական գյուղում խոշոր անելիքներ ունի: 16-30 տարեկան գյուղացի անգրագետների քանակը քաղաքի անգրագետներից 6 անգամ շատ է: Գյուղի անգրագիտութիւն վերացման աշխատանքների հաջող ավարտման համար պահանջվող խոշոր եներգիա ցուցահանելուն զուգընթաց անհրաժեշտ է և նյութական մեծ հնարավորութիւններ, մի բան վոր միայն պետական ուժերով, առանց բանվորա-գյուղացիական լայն մասսայի ոժանդակութիւն, չի կարելի ձեռք բերել: Այստեղ է, վոր նշանակալից է դառնում «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւն գյուղական բջիջների դերը, վորպես անգրագիտութիւն վերացման աշխատանքների շուրջ գյուղական հասարակական ակտիվ ուժերը մոբիլիզացիա անող, նրանց ինքնագործնեութիւնը կազմակերպող ֆակտոր: Իզուր չէ, վոր Ռուսաստանի Կոմկուսի Կենտկոմը, կուսակցութիւն դեպի հասարակական կազմակերպութիւններն ունենալիք քաղաքականութիւն հարցերը շոշափող դերակատիվների մեջ ընդգծում է գյուղական կյանքում հատկապես «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւն վրա լուրջ ուշադրութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը, աշխատելով նպաստել նրա ցանցի տարածմանն ու աշխատանքների խորացմանը: «Կորչի անգրագիտութիւնը» ընկերութիւնը պետք է գառնա գյուղական ընկերութիւն: Միայն այդ դեպքում կարգարարվի նրա գոյութիւնը մեր իրականութիւն մեջ:

Արդ՝ ինչ պետք է անի ընկերության բնիշը գյուղում, վոր պեսզի կարողանա իրականացնել իրեն առաջադրված խնդիրները: Նախ քան այս հարցի պատասխանին անցնելը ցանկալի յե մի քանի խոսքով կանգ առնել նաև այն հարցի վրա, թե ում վրա յե հասարակական պարտականություն ընկնում գյուղում կազմակերպելու ընկերության բնիշ: Գյուղական իրականության մեջ հասարակական կյանքի ղեկավարն ու տոն տվողը գյուղական ինտելիգենցիան ե-գյուղի ուսուցիչը, կոմսոմոլը, գրագետ գյուղացին, մի խոսքով գյուղի ակտիվը. նա ել պետք է վերցնի ընկերության բնիշ կազմակերպելու ու նրան ղեկավարելու աշխատանքները: Բնիշ կարելի յե կազմակերպել գյուղի համայնքի ընդհանուր ժողովում կամ գյուղ խորհրդի, կոմիտեի, և կուսակցության բնիշների դռնբաց նիստերում ընկերության նշանակության ու նրա անելիքների մասին լայն զեկուցում գնելով: Պետք է աշխատել ընկերության բնիշի կազմակերպման առթիվ հավաքված անդամների ժողովը, վորքան հնարավոր է բաղմամբ անել: Դրանով նորակազմ բնիշը կը հասնի իր նշանակությունից մեկին՝ գյուղական լայն մասսայի մեջ հետաքրքրություն կառաջացնի դեպի ընկերության բնիշը ու նրա տանելիք աշխատանքները:

Անցնենք հիմնական հարցին՝ բնիշի անելիքներին: Այն գյուղում, վորտեղ պետության հաշվին արդեն բացված լիկ-կայան կամ կիսագրագետների խմբակ կա, ընկերության բնիշի պարտականությունն է առաջին հերթին հետևել նրանց պարամունքներին, աշխատելով վերացնել այն բոլոր խոչընդոտները, վորոնք արգելք են հանդիսանում պարամունքների կանոնավոր ընթացքին: Այս տարվա ապրիլին անց կացված քաղաք-աշխատանքի ուսումնասիրությունը յերեման հանեց այն վողորմելի դրությունը, վորի մեջ գործում են մեր անգրագիտության վերացման խմբակները գյուղերում, և վորի հետևանքը լինում է այն, վոր պետական գումարները իդուր են կորչում: Արձանագրվել են փաստեր, յերբ յերկու տարվա ընթացքում գործող անգրագիտության վերացման դպրոցները (լիկ-կայանները) վոչ-մի արդյունք չեն տվել, անգրագետները մնացել են դարձյալ անգրագետներ, չը նայած ուսուցիչը իր վարձը ստացել եւ ի հարկե դրանում միշտ չի կարելի մեղադրել ուսուցչին, շատ դեպքերում այդ կատարվում է որյեկտիվ պատճառներով՝ լույսի, վառելիքի, հարմարին շենքի բացակայության, ու-

սանդղների վոչ կանոնավոր հաճախման և այլն: «Կորչի անգրագիտությունը» ընկերության բնիշը այդպիսի դեպքերում պետք է խստիվ միջոցներ ձեռք առնի, թեկուզ և համայնքի ընդհանուր ժողովում գնելով այդ հարցը ու աննորմալ վիճակից հանի դպրոցի պարամունքները. Ընկ. բնիշը գյուղում հասարակական կոնգրուի մարմնացումն է լինելու և այդպես ել մնալու և մինչև իր աշխատանքների ավարտումը տվյալ գյուղում: Սակայն դրանով չի սահմանափակվում ընկ. բնիշի անելիքը: Մեր գյուղական իրականության մեջ, վորտեղ անգրագիտությունը խոշոր չափերի յե հասնում, պետության կողմից բացված հասակավորների մեկ դպրոցը չի կարող իր մեջ ընդունել գյուղի բոլոր անգրագետներին, դպրոցից դուրս անյուշտ անգրագետներ կմնան: Գյուղական բնիշը պետք է հոգա նաև այդ դպրոցից դուրս մնացածների մասին: նա պետք է բացի իր լիկ-կա-աճը: Չե վոր ընկերության անմիջական նպատակն է լայնացնել հասակավորների դպրոցների ցանցը. գյուղական բնիշները այդ բանի անմիջական իրականացողն են: Ձեռնարկելով դպրոցի բացման աշխատանքներին, բնիշը ամենից առաջ հաշվի յե առնելու գյուղի 16—30 տարեկան անգրագետներին ու խմբակ կազմելով և գտնելով հարմարին շենք հանձնարարելու յե բնիշի դրագետ անդամներից մեկն ու մեկին պարամելու: Պարզ է ու հասկանալի, վոր նորաբաց դպրոցը ծախսեր է պահանջելու. նույնիսկ այն դեպքում, յերբ դպրոցում դասավանդող ընկերը հանձն է առել ձրիաբար պարամել: Դպրոցի համար հարկավոր է գրեհական ու դասական պիտույքներ առնել, պակասավոր իրերի գնումներ կատարել և այլն, կամ թե չե քիչ թե շատ ոգնություն հասնել դպրոցում ձրիաբար պարամող ուսուցչին, յե-թե նա նյութական սուղ վիճակումն է ապրում: Այդ բոլորը պահանջում են, վոր բնիշը նյութական ֆոնդ ունենա: Աշխատանքների համար նյութական հնարավորություններ ստեղծելու նպատակով բնիշին պետք է տալ կազմակերպչական այնպիսի ձև, վոր նրա անդամների մի մասը միշտ մտահոգվի այդ ուղղությամբ: Անհրաժեշտ է կազմակերպել սեկցիաներ՝ ֆինանսական, ագիտացիոն և այլն: (Սեկցիաների աշխատանքների մասին տես քաղաքային գնիշների աշխատանքների նախագիծը): Սեկցիաներ կազմակերպելը ոգտակար է նաև բնիշի կենսունակացման, կենդանացման տեսակետից: Բնիշային աշխատանքների հաջողությունը, նրա անմիջական խնդիրների իրագործումը,

հնարավոր և միայն բնական բոլոր անդամներին բնական առարկան աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով: Չը պետք է լինեն միայն անդամավճար տվող, ասել է թղթի վրա գոյութուն ունեցող անդամներ: Դրանով կամավոր անգամագրություն հաստատական բնույթը մոռացվում է:

Բնական յուրաքանչյուր անդամ պարտադիր կերպով պետք է աշխատի անդրադարձության վերացման այս կամ այն ասպարեզում: Աշխատանքներ շատ: Շատերը կը դործեն սեկցիաներում, մի քանիսը կը հետևեն ուսանողության հաճախումներին, չորրորդներնուհինգերորդները կապ կապանեն զանազան մարմինների ու ընկերության վերին որգանների հետ, կը կատարեն անգրագետների հաշվառում կամ թե չե իրենց վրա կը վերցնեն մոտիկ գյուղում ընկերության բնիշ կազմակերպելու աշխատանքները և այլն:

Բնական աշխատանքների հաջողության գրավականներից մեկն էլ գյուղական համայնքի հետ ուժեղ կապ պահպանելն է, վորը արտահայտվելու յե գյուղական համայնքի ընդհանուր ժողովում բնիշ աշխատանքների մասին պարբերաբար գեկուցումներ տալով: Դա միևնույն ժամանակ և խոշոր ագիտացիա յե հոգևոր անգրագիտության վերացման: Բնիշները չը պետք է մոռանան, վոր յուրաքանչյուր գաղափար, յերբ տիրում է մասսային, ուժ է դառնում: Դրանում է կայանում խորհրդային հասարակականության եյությունը: Այդ տեսակետից բնիշ կողմից մղվող ագիտացիան յերբեք դադար չը պետք է առնի:

Բնիշային աշխատանքների մեջ մի կարեւոր մոմենտ ևս հարկավոր է ընդգծել:

Կիսագրագետների դպրոցների բովով անցած և արդեն գրագետ դարձած ընկերները հետագայում ուղադրություն չը դարձնելով ինքնուսուցման վրա, աստիճանաբար մոռանում են իրենց գրաճանանչությունը: Ընկերության բնիշը կոնկրետ միջոցներ պետք է մշակի դպրոցավարտ հասակավորներին կապելու գյուղի խրճիթ—ընթերցարանի աշխատանքների հետ և լրագիր ու գրքեր կարդալը նրանց համար սովորություն դարձնի: Վորը միակ միջոցն է այդպիսի անցանկալի յերևույթների դեմ կռվելու համար:

Այժմ անցնենք այն բնիշին, վորի գործելավայրում պետության հաշվին գործող հասակավորների դպրոց չկա: Ինքնուսուցման հասկանալի յե, վոր այդպիսի բնիշին առաջադրված

խնդիրները, իրենց ծավալով ավելի խոշոր են ու դժվար լուծելի, քան թե մի ուրիշ տեղ, վորովհետև տվյալ գյուղի սահմանում նա միակ անգրագիտության վերացման որդանն է, վոր միայնակ է տանելու գյուղի 16-30 տարեկան հասակավորների մեջ անգրագիտության վերացման աշխատանքները: Այդ տեսակետից նրանից ավելի շատ յեռանդ ու աշխատանքային լարվածողություն է պահանջվում պատվով իրականացնելու իր պարտականութունները: Բնիշի առաջնահերթ խնդիրը, այդպիսի գյուղում, իր հաշվով բացված լիկ-կայանի կամ կիսագրագետների խմբակի համար նյութական միջոցներ ստեղծելն է, վոր և նրա աշխատանքների առանցքն է կազմելու: Դրա համար նա պետք է հաշվի առնի բնիշի գրագետ ուժերին, ուժեղացնի ֆին և ագիտացիոն սեկցիաները, համայնքի ուղադրությունը գրավի նորաբաց դպրոցի շուրջ, նյութական ոժանդակություն ստանալու համար և վոր ամենապիստովորն է աշխատի ընկերության բնիշի մեջ գրավել նաև այն անգրագետներին, վորոնց մեջ անգրագիտությունը պետք է վերացվի: Վերջինս, յելնելով պահանջվող նյութական ծախսերը կրճատելու հեռանկարներից, խորհուրդ է տրվում ընդհանրապես ընկերության բոլոր բնիշներին: Ընկ. անգրագետ անդամը, գաղափար թե ինչպես գյուղի համայնքը, ընկերության բնիշի մեջ կազմակերպված, ճիգ է թափում իր և իր նմանների միջից անգրագիտությունը վերացնելու, ինքը ևս կը աշխատի իր կողմից բնիշին վորոշ ոժանդակություն ցույց տալ: Անշուշտորեն այդպիսիներից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա իր համար գնելու գրենական ու դասական պիտույքներ, իսկ դա խոշոր չափով կը թեթեւացնի բնիշի գրությունը:

Ընկերության բնիշի աշխատանքների մեջ հիմնական նշանակություն ունեցող խնդիրներից մեկն էլ ընկերության վերին որդանների հետ ուժեղ կապ պահպանելն է: Ընկ. բնիշները շատ ղեպեքում պարզ չը պատկերացնելով իրենց ֆունկցիաները և ունենալիք փոխ-հարաբերությունները գյուղի զանազան կազմակերպությունների ու մարմինների հետ, անցանկալի քայլեր են անում:

Շրջկենտրոնի ու Գավկենտրոնի ուժեղ ղեկավարությունը այդ բոլորի առաջը կառնի ու բնիշի աշխատանքները կանոնավոր հունի մեջ կը դնի: Վերջինիս պետք է ձգտեն հասնել իրենց ղեկավարության ընթացքում նաև գյուղի կուսակցության և կոմյերիտմիության բնիշները: Սրանք իրենց առարկա գործ-

նեությամբ վոչ միայն նպաստելու յեն բջիջների կենդանացմանը այլ և ձգտելու յեն նրանց շուրջը համախմբել անկուսակցական գյուղացիության ակտիվիտետը ու նրանց մեջ ծնեցնելով ինքնուրույն գործնեության ունակություն, բջիջի աշխատանքները թողնելու յեն նրանց հայեցողությանը, բավականանալով միայն պարբերաբար ընդհանուր ցուցմունքեր տալով:

Գ. Սարգսյան.

**ԽՐԺԻԹ-ԸՆԹԵՐԾԱՐԱՆԸ ՈՒ «ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ.**

Քիչ թե շատ վորակավորված, ինչպես նաև պատրաստված խրճիթավարների պակասությունը զգացվում է խրճիթ-ընթերցարանի ամեն մի աշխատանքի ասպարեզում: Չի արվում վոչ միայն այն աշխատանքը, վոր փողի կամ խողոր դժվարությունների հետ է կապված, այլ համարյա միշտ աչքաթող է արվում նաև այն աշխատանքը, վոր շատ հեշտությամբ կարելի եր տանել խրճիթ-ընթերցարանում: Դրա պատճառն են է, վոր մեր խրճիթավարներից շատ շատերը լավ չեն իմանում խրճիթ-ընթերցարանի դերը և անելիքը:

Խրճիթ-ընթերցարանը պիտի լինի գյուղի լուսավորության կենտրոնը, նրան դեպի սոցիալիզմ առաջնորդողը, նոր կյանքի հիմքերը տարածողը: Թե եղեպես է, իսկ եղեպես է, հապառենք առաջին տեղն է բռնելու այբբենական անգրագիտության վերացումը: Անգրագետ գյուղացուն ինչքան էլ սովորեցնես, են չի, ինչ վոր գրագետին: Անգրագետը թե մի բան կը սովորի միաժամանակ, գրագետը կը սովորի մի որում ու մի շարքում: Իսկ անգրագիտության վերացման աշխատանքների ասպարեզում պիտի խոստովանենք, վոր խրճիթ-ընթերցարանները վոչինչ չեն արել կամ ամենալավ դեպքում շատ քիչ բան են արել: «Դա լիկկայանի գործն է» — մտածել են նրանք ու Պեղատոսի նման ձեռքերը լվացել, հետ քաշվել:

Դե հիմա տեղը չի դրա մասին խոսելու, բայց ցավն են է, վոր խրճիթ-ընթերցարանները «կորչի անգրագիտությունը» ընկերությանն ոգնելու գործում ել մի առանձին բան չեն արել: Շատ անգամ եղ ընկերության բջիջը կապ ել չի ունեցել խրճիթ-ընթերցարանի հետ: Դե իհարկե դա սխալ է:

Խրճիթ-ընթերցարանն ինքն է լինելու «կորչի անգրագի-

տությունը» ընկերության բջիջ կազմակերպողը և նրա անդամների ուժերից ոգտվողը: Խրճիթ-ընթերցարանի վարչությունը հանձն է առնում եղ աշխատանքը և կազմակերպում բջիջ. դրանից հետո ել ձեռք ձեռքի տված նրա հետ, վերացնում է գյուղի անգրագիտությունն ու լուսավորում գյուղը:

Եղ վոր եղպես չի յեղել, մի ուրիշ պատճառ ել կա: Շատ անգամ թե խրճիթավարները և թե «կորչի անգրագիտությունը» ընկերության անդամները սխալ են հասկանում իրենց անելիքը:

Նրանք հենց են իմանում թե ընկերության գործն է հանդեսներով, յերեկույթներով ու այլ միջոցներով փող ձարել, վոր անգրագիտությունը վերացվի:

Եղ կա. բայց ընկերության գործը մենակ փող ձարելը չի, նա քաղլուսավարական աշխատանքների դանազան մեթոդների միջոցով (բարձրաձայն ընթերցում, զրույց, դասախոսություն և այլն) պիտի լուսավորի գյուղը, կիսագրագետին քաշի դեպի գրագիտություն, անգրագետի հետ պարապի ու դանազան գիտելիքներ տարածի: Այդպիսով ընկերությանը դառնում է խրճիթ-ընթերցարանի աջ թեկն ու նրան ամեն ինչում ոգնողը:

Խրճիթ-ընթերցարանի վարչությունն ել ընդառաջ է գնում ընկերության բջիջին: Միասին կազմում են «կորչի անգրագիտությունը» անկյուն, ուր հավաքում են ամբողջ ագիտացիոն ժառանգար. դա կոգտագործվի ագիտացիայի և պարապմունքների ժամանակ:

Ի հարկ է դրա համար հարկավոր է, վոր խրճիթ-ընթերցարանի վարչությունն ու «կորչի անգրագիտությունը» ընկերության բջիջը ուժեղ կապ պահեն իրար հետ: Նրանց աշխատանքը համաձայնեցված է լինելու և տարվելու և խրճիթ-ընթերցարանի միջոցով. այդպիսով խրճիթ-ընթերցարանի վարչությունը դառնում է մի ոգնող կազմակերպություն, վորի հետ համագործակցելով իր վրա դրված պարտականություններն ավելի լավ ու լրիվ է կատարում նա:

Եղ յերկուսը թե իրարից կտրված լինեն, գործը առաջ չի գնա. դուրս կը գա, վոր կան Չ կազմակերպություններ, վորոնք նման աշխատանք են տանում: Ամեն մեկը կը քաշի իր կողմն ու բեռը կը մնա անշարժ:

Ես տարվանից ավելի ուժեղ կապով կապվելով իրար հետ, պիտի անցնել լարված աշխատանքի:

Գ. ՔԱՅԱՂՅԱՆ



60339-67

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԱՎՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻՑ

1. Գավառի բոլոր շրջկենտրոններում, որինակելի խըր-
ճիթ-ընթերցարաններին կից, կազմակերպել ընկերության շրջա-
նային վարչություններ և ղեկավարել նրանց աշխատանքները:

2. Սիստեմատիկ կապ պահպանել կուսակցական, կոմսոմոլիս-
տական, խորհրդային, արհեստակցական և տնտեսական կազմա-
կերպությունների ու մարմինների հետ:

3. Ուժեղացնել քաղաքում և գյուղում «Կորչի անգրագի-
տությունը» ընկերության բժիշկներ կազմակերպելու աշխատանք-
ները, այնպես վոր գաղառային քաղաքի բոլոր հիմնարկներին
(անդկոմներին), գործարանային կոմիտեներին, խրճիթ-ընթեր-
ցարաններին, լիկայաններ ունեցող և չունեցող գյուղերում մոտիկ
ժամանակներում արդեն կազմակերպված լինեն բժիշկներ:

4. Բնորոշել հաստատուն ցանցի մեջ մտնող լիկայաններին
կցված բժիշկների աշխատանքների ծրագիրը և աշխատել կիրա-
ռել այն:

5. Վորոշել թե քանի բժիշկներ կան, վորոնք իրենց-հաշվով
լիկայաններ են պահում և ղեկավարել ու նյութական ոգնու-
թյուն հասցնել նրանց:

6. Հաշվի առնել բժիշկների ակտիվ ուժերին ու տալ նրանց
անհատական ու խմբակային պարապմունքներ, այդ նպատա-
կով համաձայնության գալով անդ. վերացման գալ. հանձնաժո-
ղովի հետ:

7. Կուս. և քաղկուսի հրահանգիչների, ինչպես նաև սիստե-
մատիկ զեկուցումների ու կոնֆերանսների միջոցով կապ պահ-
պանել ընկերության շրջանային վարչությունների հետ:

8. Կանոնավորել աշխատանքների հաշվեհաճման գործը:

9. Ագիտացիայի համար ոգտադործել տեղային և կենտրո-
նական թերթերը, զանազան համագումարները, խորհրդակցու-
թյունները, կոնֆերանսները, կին բաժինների պատգամավորու-
հիշների ժողովները և այլն:

10. Շեֆկոմիտեների հետ ստեղծելով ուժեղ կապ նրանց
միջոցով յենթաշեֆ գյուղերում կազմակերպել ընկերության բը-
ջիշկներ:

11. Մշակել բժիշկային աշխատանքների որինակելի ծրագիր:

12. Գավ. վարչության գործնեյութան համար ստեղծել
նյութական հնարավորություններ:

ա) Կազմակերպելով յերեկույթներ, կոնցերտներ, դա-
սախոսություններ, ներկայացումներ, նվիրատվություններ, հան-
գանակություններ և այլն:

բ) Մրցումներ (լրագրների մեջ մրցման հրավերելով)
կազմակերպելու միջոցով:

գ) Զվարճատեղերի տոմսերի գների վրա տոկոսներ
ավելացնելով:

13. Ընկերության կենտրոնական վարչության հետ պա-
հել ուժեղ կապ:

Ն Ր Ա Ն Ա Ն Գ

«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՁԻՋՆԵՐԻՆ

ԲՁԻՋԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԲՅԻՅԻ անմիջական խնդիրների իրագործման մեջ են
գրավվում բՅԻՅԻ բոլոր անդամները, անխտիր կերպով, վորի հա-
մար նպատակահարմար և բՅԻՅԻ ներսը կազմակերպել ագիտա-
ցիոն, կազմակերպչական, ֆինանսական և դպրոցային սեկցիաներ:

Մանր.— Ագիո. սեկցիան հաշվի յե առնում բՅԻՅԻ
ագիտացիոն ասպարեզում աշխատանքի ընդունակ անդամ-
ներին և վերապատրաստում նրանց, ագիտացիայի համար
մշակում և թեղիսներ, իմանում և հավակույթների (անկու-
սակցական և կուսակցական) տեղերը և ժամը ու հանդես
գալիս հատուկ զեկուցումով, տանում և ինդիվիդուալ ա-
գիտացիա, պատրաստում և թղթակիցների կադր՝ տեղային
թերթերում լուսաբանելու անգրագիտության վերացման և
ընկերության աշխատանքների անմիջական խնդիրները,
ֆելեյտոնի, կարիկատուրանների, շարժերի և այլն միջոցով
ծաղրում և աշխատանքից խուսափողներին և ընդհակառակը
նման և ուրիշ միջոցներով վոգեվորում ակտիվիստներին,
կազմակերպում և քաղ. դատեր (անգրագիտի վրա), դպրո-
ցավարների հանդիսավոր արձակուրդներ և այլն և այլն:

Մանր.— Ճիհանսական սեկցիան միջոցներ և ձեռք
առնում բՅԻՅԻ աշխատանքների համար ստեղծելու նյու-
թական բազա, վերի համար համապատասխան ուժերին՝
դերասան-սիրողներին, յերգիչներին, արտասանողներին,

նվագողներին և այլն հավաքում և իր շուրջը, կազմակերպում և վճարովի յերեկույթներ, ներկայացումներ, դասախոսություններ, նվիրատվություններ. ստանում և թղթակցությունների հոնարարները, ծախում և կրթչանշաններ, և այլն: Բջիջի միջոցներով բացված լիկկայանին մատակարարում և գրենական և դասական պիտույքներ, բջիջի ակտիվիստներին վոգեվորելու համար տալիս և նվերներ, գրքեր, նրանց համար դուրս և գրում լրագրներ և այլն): Վերջին յերեկուսը արվում և միայն բջիջի պրիզիդիումի գիտություններ:

Ծանոթ — Ի. Կազմակերպչական սեկցիան մշակում և բջիջի կազմակերպչական խնդիրները, պարզում և բջիջի և կուլտ—սեկցիանների (տեղկոմների, գործար. կոմիտեների և այլն) փոխհարաբերությունները և այլն:

Ծանոթ. Դ. Դպրոցական Սեկցիան. հաշվի յն առնում բջիջի միանգամայն զրադետ անդամներին և կցում բջիջի միջոցներով բացված դպրոցին, վորպես դասատուներ, կիրառում անհատական ուսուցման մեթոդը, դասատուների կազմին ծանոթացնում կոմպլեկսիվ մեթոդի և մեծահասակների հոգեբանություն հետ և այլն:

2. Նախքան իրենց աշխատանքների ծրագիր մշակելը բջիջները պետք և ծանոթանան հիմնարկների, ձեռնարկությունների և բանվորական կազմակերպությունների ձևերի հետ:

3. Բջիջները պարտավոր են ուժեղ կապ պահպանել ընկերության շրջանային բյուրոների հետ, սխառեմատիկաբար նրանց ուղարկելով իրենց գործնեություն մասին զեկուցումներ:

4. Բջիջների ծրագրերի մշակմանը մասնակցություն պիտի ցույց տան և կուլտ—սեկցիանների և գործարանային կոմիտեների ներկայացուցիչները: Ծրագիրները մշակվում են հաշվի առնելով բան—ակումբների, գրադարանների և զանազան խմբակների գործնեությունը:

5. Բջիջը աշխատելով կուլտ—սեկցիանների և այլերի հետ կոնտակտ կերպով, յերեք իր վրա չի վերցնում նրանց ֆունկցիաները:

6. Բջիջները իրենց միջի կարող ուժերից առաջ են քաշում ագիտատորներ և կազմակերպիչներ ու նրանց միջոցով ուրիշ տեղերում կազմակերպում ընկերության բջիջներ:

7. Բջիջները ոգնում են կուլտ—սեկցիաններին կատարելու անգրագիտների հաշվետու (վորոշելով սեռը, քանակը, տարիքը և այլն) և պարզելու այն հանգամանքները, վորոնք խանգարում են ուսանողների կանոնավոր հաճախմանը:

8. Ռեցեդիվներ առաջ գալու դեմ պայքարելու համար բջիջները միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի ուսանողությունը հաճախի խրճիթ—ընթերցարան, ակումբ, խմբակային պարապմունքներին և այլն:

9. Բջիջի անդամների (բանվորական) զարգացման մակարդակը բարձրացնելու նկատառումով բջիջները (ուսանողական) կազմակերպում են ընդհանուր զարգացման կուրսեր:

10. Բանվորության մտավոր հորիզոնը լայնացնելու նպատակով կազմակերպում են լրագիրների բարձրագույն ընթերցում, դասախոսություններ, կինո—սիանսներ, ոգտագործում են մոգական լապտերները և այլն:

11. Ընկերության քաղաքային բջիջները իրենց աշխատանքները գյուղերում տանում են այցելությունների միջոցով: Յեթե ընկերության բջիջը գտնվում և արդեն շեֆ հիմնարկին կամ ձեռնարկին կից, նա շեֆ բյուրոյի միջոցով կապվում և յենթաշեֆ գյուղերի հետ: Մասնավոր դեպքում բջիջը ընկերության շրջաբյուրոյի համաձայնությունով վերցնում և մի քանի գյուղերի շեֆությունը:

12. Շեֆբջիջի հիմնական աշխատանքը գյուղում ընկերության բջիջ կազմակերպելն է:

13. Շեֆբջիջը յենթաշեֆ բջիջի ամբողջ ներդրման ուղղում և անգրագիտության վերացման ասպարեզում յեղած խոչընդոտների դեմ, տոն ու բովանդակություն և տալիս նրա աշխատանքներին, մատակարարում և համապատասխան գրականություն և այլն:

14. Բջիջը յենթաշեֆ բջիջի ֆունկցիաները յերեք իր վրա չի վերցնում, այլ միայն նրան կյանքի յն կանչում, նրա մեջ ձևեցնելով ինքնուրույն գործնեության կարողության հավակնություն, ոգնելով իր փորձառություններով և նյութական միջոցներով:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ.—

1. Իմանալ յերբ և վորտեղ են գումարվելու ժողովներ ու այնտեղ հանդես գալ անգրագիտության վերացման մասին զեկուցումով:

2. Դեպի բջիջը գրավել նոր անդամներ:

3. Նպաստել գյուղական լիկկայանի աշխատանքների կանոնավորմանը:

4. Հաղթահարել այն բոլոր խոչընդոտները, վորոնք արգելք են հանդիսանում ուսանողների կանոնավոր հաճախմանը:

5. Հաշվի առնել գյուղի աշխատունակ (16-30 տ.) անգրագետներին ու խմբակներ կազմակերպելով հանձնարարել բջիջի միանգամայն գրագետ (ուսուցիչ, կոմսոմոլիստ) անդամներին նրանց հետ պարագելու:

6. Խմբակներից դուրս մնացած անգրագետներին կցել գրագետ ընկերներին և հետևել, վոր պարագմունքները տարվեն կանոնավոր կերպով:

7. Մտածել Լիկկայանին անհրաժեշտ ինվենտարի մասին, հայթայթել գրենական և դասական պիտույքներ:

8. Բջիջի ակտիվ ընկերներին վոգեվորելու համար տալ այդպիսիներին զանազան նվերներ, նրանց համար դուրս գրել լրագրներ, յերաշխավորել զանազան վարկերի համար և այլն:

9. Ոգնել անգրագետների խմբակի հետ ձրիաբար պարագող ընկերջը՝ նյութական վատ դրության մեջ գտնվելու ժամանակ:

10. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի լիկկայաններում սովորող ընկերները հաճախեն խրճ. ընթերցարանը և կարդան լրագրներ:

11. Հաստատուն կապ պահպանել շրջանային մարմիններին հետ սխտեմատիկաբար նրանց ուղարկելով բջիջի գործնեսության մասին մանրազնին գեկուցումներ:

12. Բջիջի կարող ուժերից առաջ քաշել ագիտատորների մի կազմ:

13. Բջիջի գործնեսության համար ստեղծել նյութական բազա, կազմակերպելով յերեկութներ, ներկայացումներ, հանգանակություններ, նվիրատվություններ և այլն:

14. Բջիջի անդամների մեջ կատարել աշխատանքների բաժանում, այդ նպատակով կազմակերպելով 4 սեկցիաներ՝ ագիտացիոն, ֆինանսական, կազմակերպչական և դպրոցային բջիջի անդամներին բաշխելով այդ սեկցիաների մեջ:

Թ Ե Ձ Ի Ս Ն Ե Ր

«ԿՈՐՁԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՁԵԿՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Ռազմական Ֆրոնտում իր վարած հաղթական պայքարից հետո, Խորհրդային Միության բանվորա-գյուղացիական մասսան առաջին անգամն է, վոր լիակատար հնարավորություն է ձեռք բերում ստեղծագործելու և շինարար աշխատանքով վերաշինելու իմպերիալիստական և քաղաքացիական կոիքների հետևանքով միանգամայն քայքայված տնտեսությունը:

2. Սակայն բանվորա-գյուղացիական մասսան իր հեղափոխությունը կատարել է մի յերկրում, ուր թագավորել է և շարունակում է թագավորել ժողովրդական հոծ մասսաների անասելի սգիտությունը և կուլտուրական հետամնացությունը: Ստեղծագործող, շինարար աշխատանքի լծված մասսայի մեջ թագավորող անգրագիտությունն իր ահռելի չափերով խոշորագույն արգելափթի հանգամանք է հանդիսանում Խորհրդային իշխանության տնտեսական և կուլտուրական վերելքի դժվարին ճանապարհին:

3. Հոկտեմբերյան նվաճումներին միացած Հայաստանի իշխանությունը նախկին տերերից ժառանգություն է ստացել տնտեսապես ավերված մի յերկիր, ուր խավարի մեջ խորխափող հայ գյուղը սոցիալիստական շինարարության, կոմունիզմի հիմքերը կերտող աշխատանքների հանդեպ կանգնած է վորպես խոչընդոտ, զուրկ իրա աշխատանքները ինտենսիվ ձևով տանելու, գիտության և տեխնիկայի նվաճումներից ոգտվելու կարողությունից. անգիտակցաբար նա կասեցնում է կոլլեկտիվ, մասնավորից դեպի համայնական տնտեսությունն անցնելու փորձերը:

4. Հայաստանի նման մի յերկրում, վորը գերազանցորեն գյուղացիական յերկիր է, ելքաորականությունը խոշոր դեր ունի կատարելու Սակայն մեր գյուղացու համար ելքաորականությունը մի անհասկանալի և առեղծվածային ուժ կը մնա. նա չի կարող նրանից ոգտվել, քանի դեռ անգրագետ է, և իր պապական չթից, գութանից, յեղանից չի հրաժարվի, իսկ այդ նահապետական գործիքները ելքաորականության վոխերիմ թշնամիներն են:

5. Խորհրդային իշխանության պայմաններում, յերբ արտադրության հիմնական միջոցները խորհուրդների մեջ կենտրո-

նացած բանվորների և գյուղացիների սեփականությունն են կազմում՝ սոցիալիզմին անցնելու համար հարկավոր և միայն ժողովրդական լայն մասսաներին կոոպերացման յենթարկել, վոր սոցիալիզմ չը լինելով հանդերձ, սակայն իր մեջ պարունակում է այն ամենը, ինչ վոր սոցիալիզմի կոոպերացման համար անհրաժեշտ է: «Ամբողջ յերկիրը կոոպերատիվ կազմակերպության մեջ մտցնելու դեպքում մենք արդեն յերկու վրտքով սոցիալիզմի հողի վրա կանգնած կը լինենք» ասում է Լենինը—Սակայն կուլտուրական հեղափոխությունը մեզ համար շատ մեծ դժվարություններ է ներկայացնում, մենք անգրագետ և աղքատ ենք:»

6. Արդյունաբերության ասպարեզում աշխատանքի արտադրողականության բարձրացումը կախված է այն բանից, թե վոր չափով բանվորն ի վիճակի չի իր աշխատանքային լարվածությունը և վորակն աճեցնելու: Խորհրդային Միության մեջ բանվորից մոչ միայն տեխնիկական ու պրոֆեսիոնալ կրթություն է պահանջվում, ուրիշների դեկավարությունը աշխատելու համար, այլ և լուրջ պատրաստականություն տեխնիկական ու քաղաքական հարցերում՝ մեր տնտեսության ու հասարակական քաղաքական ամբողջ կյանքը կազմակերպելու և դեկավարելու համար: Այդ բոլորի նկատմամբ անգրագետ բանվորը հնարադուրկ է:

7. Խորհրդային իշխանությունը ձգտում է կուլտուրան դարձնել բանվորա-գյուղացիական լայն մասսայի սեփականություն, ասեղծել ներ կուլտուրա, ժողովրդական կուլտուրա, հաշվառող իր բովանդակությունով, իսկ դրա նախապայմանը կազմում է անգրագիտության վերացումը:

8. Խորհրդային իշխանության ապագա նվաճումները խոշոր չափով կապված են այն բանից, թե բանվորն ու գյուղացիությունը, վոր չափով են հասկանում ներկա հեղափոխությունը և գիտակցաբար իրենց ուժերը տրամադրում նրա պահպանման համար:

ԱՆԳՐԱԳԻՏԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ Ե (ԼԵՆԻՆ):

9. Վերոհիշյալ խնդիրները մեր հեղափոխության առջև ծառանում են, վորպես քաղաքական, գյուղատնտեսա-արդյունաբերական պրոբլեմներ և պահանջում իրենց լուծումը: Սակայն դրանց լուծումը անհնար է բանվորա-գյուղացիական լայն մասսայի մեջ անգրագիտության տիրապիտության պայմաններում: Հոկտեմ-

բերյան հեղափոխության Ցասերեարդ Ցարեգարնին մեր յերկուս մոչ մի անգրագետ չը պեժ է լինի:» (ԼԵՆԻՆ):

Մենք պարտավորվում ենք Լենինի այս լողունը իրականացնել Հայաստանում նոյսմբերյան հեղափոխության տասերորդ տարեդարձին (1930 թ.):

10. Մենք գիտակցում ենք, վոր մեր առջև չափազանց դժվարին խնդիրներ են դրված, խնդիրներ, վորոնք չափվում են Հայաստանի անգրագետ բանվորների և գյուղացիների քանակով:

Համայնապատ. մասշտ. անգր. թիվը (17—35 տ.)	Ուսումնական տարին	Անգր. վերաց.	Վոր տոկոսը
206,971	24—25	15,000	7,2
	25—26	30,000	14,4
	26—27	45,000	21,7
	27—28	45,000	21,7
	28—29	60,000	23,9
	29—30	12,571	6

11. Մեր պետությունը ծանրաբեռնված է տնտեսական վրուզումի հետևանքը կազմող ծախսերով և չի կարող անգրագիտության վերացման համար իր առանց այն էլ սուղ բյուջեյից հարկավոր քանակով դուրս տրամադրել: Նրա ոգնությունը չնչին է: Այդ պատճառով անհրաժեշտություն դգացվեց լայն մասսայի ոժտանդակությանը դիմել: Խորհրդային հասարակականության ուղադրությունը կենտրոնացնել նրա վրա: Այս տարի, 25—26 ուսումն. տարում պետք է 30,000 անգրագետի բնդունենք մեր լիկ-կայանները:

12. Անցյալի վորձառությունը ցույց տվեց, վոր «Կորչի անգրագիտությունը» ընկերության ծավալման համար կազմակերպչական տեսակետից բջջային սխտեմը միայն կարող կը լինի անդրադիտության վերացման անհրաժեշտությունը դարձնել մասսայի սեփականություն: Նա այն ողակն է, վոր մասսային կապիտու է անգրագիտության վերացման աշխատանքների հետ: Անգրագիտության առկոսը չտեսնված չափերի յե հասնում մասնավորապես գյուղի բնակչության մեջ, վորի 13,1 տոկոսն է միայն գրագետ: Դյուղի և քաղաքի միջև ընկնում է խորխորատ. գյուղը քաղաքից կուլտուրապես հետ է մնացել, այնտեղ անգրա-

գիտութիւնը խոշոր չափերի յե հասնում: Գյուղում անգրագետ-
ների թիվը 6 անգամ շատ է քաղաքից: Այդ խորիւրատը ստեղ-
ծում է կուլտուրական մկրտաթի ֆրոնտը: Անհրաժեշտութիւն է
կազմում գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը և
մոտեցումը քաղաքի կուլտուրական մակարդակին:

13. Գյուղի աշխատանքները պետք է մեր ուղադրութեան
կենտրոնում ունենանք, մեր յեղբայրական աջակցութեամբ մի-
այն գյուղը կարող կը լինի խաւարի ճանկերից ազատվել: Բան-
վորա—ինտելիգենտական հոծ մասսան խոշոր դեր ունի այս
գործում: Նա պետք է վերցնի գյուղի կուլտուրական շեփու-
թիւնը: Մեր նշանաբանը պետք է լինի ամեն միջոցով ամգ-
րագիտութեան դեմ կռիւ: Անգրագիտութիւնը անցյալից մնա-
ցած ամենավատ ժառանգութիւնն է, վորի դեմ մենք անդադար
պետք է պայքար մղենք, հիշելով, վոր «Աշխատավորութեան
ազատագրումը ագիտութեան ճանկերից իրեն աշխատավորու-
թեան ձեռքի գործն է», (Լենին): Բանվորութեան, գյուղացիու-
թեան և ազնիվ քաղաքացիների՝ ազդ լողունգի շուրջ համախմբ-
վելը մեր հաղթութեան գրավականն է:



«Ազգային գրադարան»



NL0222747

53.571

1

2

Տրեւրի Առաջին տպարան

Իրաւ. № 149բ. Պատ. № 4892, Տիրութ 600. Յերևան